ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (17.01.2022թ.-16.06.2022թ.) ԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ (27.06.2022թ.-14.07.2022թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2022 թվականի հունվարի 17-ին և ավարտվել հունիսի 16-ին:

Գումարվել է՝

- 8 հերթական,

- 5 արտահերթ նիստ՝ մարտի 9-ին, ապրիլի 1-ին, մայիսի 6-ին, մայիսի 19-ին, հունիսի 9-ին,

- 1 հատուկ նիստ՝ մարտի 13-ին՝ նվիրված Հանրապետության նախագահի պաշտոնի ստանձնմանը:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 5 արտահերթ նստաշրջան՝ հունիսի 27-ին, հունիսի 29-ին, հուլիսի 1-ին, հուլիսի 6-ին և հուլիսի 14-ին:

Ազգային ժողովն ընդունել է 338 օրենք, որից՝

- 5-ը «մայր» օրենքներ են՝ («Անկանխիկ գործառնությունների մասին», «Սնդիկի մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2020 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին», «Հայաստանի

Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք»):

- 315՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 18՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 293-ի հեղինակը Կառավարությունն է, 39-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները, իսկ 6-ինը Կառավարությունը և Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 10-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 6-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 3-ինը՝ Արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովը, 9-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 15-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 170-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 5-ինը՝ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 30-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 66-ինը՝ Տնտեսական հարցերի

մշտական հանձնաժողովը և 21-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- **ընտրել է՝**

- Հանրապետության նախագահ,
- Մարդու իրավունքների պաշտպան (Քրիստիննե Գրիգորյան),
- Հաշվեքննիչ պալատի նախագահ (Ատոմ Ջանջուղազյան),
- Գլխավոր դատախազ (Աննա Վարդապետյան),
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 3 անդամ (Հակոբ (Մովսես) Հակոբյան, Արթուր Մանուկյան, Գոհար Մամիկոնյան),
- Կենտրոնական բանկի նախագահի տեղեկալ (Հովհաննես Խաչատրյան),
- Կենտրոնական բանկի խորհրդի անդամ (Լևոն Սահակյան),
- Վճռաբեկ դատարանի վարչական պալատի 3 դատավորի թեկնածու (Լիանա Հակոբյան, Արծրուն Միրզոյան, Քրիստինե Մկոյան),
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի 3 դատավորի թեկնածու (Լիպարիտ Մելիքջանյան, Արթուր Դավթյան, Գևորգ Գյոզալյան),
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի 3

դատավորի թեկնածու (Սերգեյ Չիչոյան, Կարեն Բիշարյան, Արտակ Կրկաշարյան):

- **նշանակել է՝**

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մեկ անդամ (Սեդա Շահինյան),
- Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2 անդամ (Տիգրան Մարկոսյան, Անուշ Բեղլոյան):

- **որոշմամբ հաստատել է** «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը»:

- **լսել է և ընդունել է ի գիտություն՝**

- Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին 2020-2021 թվականների հաղորդումը,
- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի գործունեության մասին տարեկան հաղորդումը,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը,
- ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումը,

- Հայաստանի Հանրապետության դատախազության 2021 թվականի գործունեության մասին հաղորդումը,
- 2021 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը և «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2021 թվականի գործունեության վերաբերյալ» տարեկան զեկույցը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի և արդյունքների զեկույցի մասին» N 234-Ա որոշմամբ հավանության արժանացած զեկույցը: